

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՖԱՐՁԱԴՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ ԲԱԳՐԱՏԻ**

**ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ  
ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

**ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ  
մանկավարժական գիտությունների թեկնածուի զիտական աստիճանի հայցման  
ատենախոսության**

**Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր**

**ԵՐԵՎԱՆ-2013**

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական  
պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

մ.գ.դ.պրոֆեսոր՝ Ի.Կ. Կարապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

մ.գ.դ.՝ Ա. Վ. Աբրահամյան

մ.գ.թ. դոցենտ՝ Գ. Ա. Ափրոյան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հովի. Թումանյանի անվան  
պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թ.-ի սեպտեմբերի  
26-ին, ժամը 14:00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավար-  
ժական համալսարանին առընթեր գործող ԲՈՂ-ի «Մանկավարժություն» 020  
մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական  
պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ.-ի օգոստոսի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար

մանկավարժական գիտ. թեկնածու, դոցենտ՝



Ա.Վ.Ավագյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Չետագոտության արդիականությունը:** Ներդպրոցական դաստիարակության համակարգը չի ձևավորվում կարճ ժամանակահատվածում և միայն մի հարացույցի /սոցիետար կամ կենսաբանական, երբ առաջնային է համարվում կամ միջավայրի, կամ ժառանգականության գործոնները/ գերակայությամբ, կամ ոճի /ավտորիտար, ժողովրդավարական, ազատական, բարձիթողի/ գերիշխանությամբ:

Ինչպես հայտնի է, ներդպրոցական դաստիարակության համակարգի ձևավորման վրա ազդում են ոչ միայն ներուսումնական, ներկառավարչական, այլև արտաուսումնական գործոնները: Այդ համատեքստում մեծ նշանակություն ունի կառավարման և դաստիարակության ոճերի փոխազդեցության դինամիկայի հստակեցումը: Պակաս կարևոր չէ պարզել, թե դաստիարակության ոճերն ինչպես են ձևավորվում ոչ միայն դաստիարակության և կառավարման մանկավարժական, այլև հոգեբանական առանձնահատկությունների տեսանկյունից:

Գաղտնիք չէ, որ ավտորիտար ոճով աշխատող տնօրենները, փոխտնօրենները, ուսուցիչներն ավելի շատ խոլերիկ են կամ սանգվիինիկ, իսկ ժողովրդավարական ոճի ուսուցիչները հիմնականում ֆլեգմատիկ կամ մելանխոլիկ են:

Կարևոր է նշել, որ դաստիարակչական գործընթացը կազմակերպելու կարևորագույն պայման է այն իրականացնողների մանկավարժական և հոգեբանական ռեֆլեքսիայի առկայությունը: Մանկավարժը պիտի ընդհանուր առմամբ իրազեկ լինի, թե ինչ մոտեցումներ /սոցիալական, հոգեբանական, մանկավարժական/ կան ներդպրոցական դաստիարակության գործընթացի կազմակերպման ուղղությամբ:

Ներդպրոցական դաստիարակության գործի ուսումնասիրությունը տարբեր կոլեկտիվներում ցույց է տալիս, որ շատ կարևոր է դպրոցի տնօրենի մանկավարժական, հոգեբանական և մեթոդական իրազեկության համապատասխան մակարդակի առկայությունը: Նա պիտի լինի ոչ միայն հոգեբան /գործնական/, այլև հոգեվերլուծող և հոգեբույժ: Իհարկե, այստեղ խոսքը վերաբերում է ոչ պրոֆեսիոնալ հոգեվերլուծողին և հոգեբույժին: Դպրոցի տնօրենն ընդհանուր պատկերացում պիտի ունենա սոցիալական հոգեվերլուծողի գործառույթների մասին:

Տարբեր կոնֆլիկտային, կոնֆլիկտածին իրավիճակներում նա պիտի ցուցաբերի կոնֆլիկտաբանի որոշակի հատկանիշներ: Այն առումով, որ

ներդպրոցական կառավարման մեջ ներգրավված անձը պետք է կարողանա ժամանակին ախտորոշել տվյալ կոնֆլիկտածին իրավիճակը, կանխորոշել, և իհարկե, հարթել կամ կանխել այն:

Շատ դեպքերում խոսքը վերաբերում է ոչ թե կոնֆլիկտները կանխելուն կամ հարթելուն, այլ դրանք ճիշտ հասկանալուն և գուցե նաև կառավարելուն: Փաստորեն, դպրոցի կառավարման բաղկացուցիչ մասերից է ոչ միայն կոնֆլիկտների կանխումն ու հարթումը, այլև կոնֆլիկտների կառավարումը: Այսինքն՝ երբ ուսուցիչների կոլեկտիվը կամ այն ներկայացնող ամեն մի անդամ տվյալ մանկավարժական իրադրությունում իրեն ճիշտ է դրսևորում, հաշվի առնելով այն ճշմարտությունը, որ կոնֆլիկտները ոչ միայն ապակառուցողական բնույթ ունեն, այլև կառուցողական են, ինչպես նաև այն հանգամանքը, որ նրանցից ընդհանրապես խուսափելն անհնարին է:

Այսպիսով, մի կողմից, մենք գործ ունենք անցումային փուլ ապրող հասարակության հետ, մյուս կողմից, այդ ժամանակաշրջանի ազդեցություններով ձևավորվող դպրոցական համակարգի հետ:

**Չետագոտության նպատակն է** բացահայտել դաստիարակչական ոճերի հոգեբանական և մանկավարժական առանձնահատկությունները և մշակել կոնֆլիկտային իրավիճակների կանխման և հաղթահարման մանկավարժական մոդել:

**Չետագոտության օբյեկտը**՝ ներդպրոցական դաստիարակության համակարգն է:

**Չետագոտության առարկան**՝ ներդպրոցական դաստիարակության համակարգում կոնֆլիկտային իրավիճակների հաղթահարման գործընթացն է:

**Չետագոտության վարկածը**

Եթե ներդպրոցական դաստիարակության համակարգում կոնֆլիկտային իրավիճակների կանխող և հարթող դիդակտիկական համակարգ մշակվի, ապա այն վճռորոշ գործոն կհանդիսանա ոչ միայն դաստիարակության, այլև ուսուցման և ուսումնառության մակարդակները բարձրացնելու համար, քանի որ այդ գործընթացները փոխկապակցված են:

Չետագոտության հիմնախնդրին, օբյեկտին, առարկային և վարկածին համապատասխան սահմանվել են հետևյալ **խնդիրները**.

1. Ուսումնասիրել դաստիարակության ոճերին, մեթոդներին և ձևերին առնչվող ժամանակակից տեսությունները:

2. Բացահայտել կոնֆլիկտային իրավիճակների կանխման և հաղթահարման մանկավարժական, հոգեբանական, հոգեվերլուծական, հասարակաբանական տեսական և մեթոդաբանական հիմքերը:

3. Հիմնավորել կոնֆլիկտային իրավիճակների կանխման և հարթման առաջարկվող ընթացակարգերը, մասնավորապես մանկավարժական տեխնոլոգիաները, մեթոդներն ու ձևերը:

4. Ստեղծել կոնֆլիկտային իրավիճակների կանխման և հարթման արդյունավետ մոդել:

5. Մշակել կոնֆլիկտային իրավիճակների կանխման և հաղթահարմանն ուղղված մեթոդիկա և մշակված մեթոդիկայի արդյունավետությունը ստուգել գիտափորձի ընթացքում:

**Հետազոտության մեթոդաբանական** հիմքում ընկած են դաստիարակության ոճերը դասակարգող տեսական դրույթները, ինչպես նաև կոնֆլիտաբանության մանկավարժական, հոգեբանական, հասարակաբանական, հոգեվերլուծական հայեցակարգերը, մասնավորապես՝ դպրոցի կառավարման ընդհանուր տեսությունը (Ս. Ա. Մովսիսյան, Լ. Թ. Ասատրյան, Ա. Ս. Կարապետյան), կրթության քննադատական տեսությունը (Ադորնո, Հորքհայմեր, Հաբերմաս), համագործակցային մանկավարժության հայեցակարգը (Զ. Դյուի, Շ. Ա. Ամոնաշվելի), նպատակահարույց ուսուցման տեսությունը (Ս. Պ. Մանուկյան), մշակույթների երկխոսության (Մ.Մ. Բախտին), համագիտական ուսումնասիրության (Ի. Վ. Բլաուբերգ, Է. Գ. Յուդին), գիտական հետազոտության (Գ. Պ. Շերոկովիցկի), մանկավարժական կարգային-հասկացական ապարատի, մանկավարժագիտության մեթալեզվի վերլուծության (Ի. Կ. Կարապետյան) տեսական և մեթոդաբանական մոտեցումները:

**Հետազոտության մեթոդները:** Հետազոտության ընթացքում և նրա արդյունքները ամփոփելու և շարադրելու համար կիրառվել են թեմային առնչվող փիլիսոփայական, մանկավարժական, հասարակագիտական, կոնֆլիկտաբանական գրականության վերլուծության, պատմական-ռեֆլեքսիվ, հասկացական – ռեֆլեքսիվ, ինչպես նաև վերլուծության և համադրման, կադապարման, ընդհանրացման և համակարգման, տեսական և էմպիրիկ, հոգեբանական հետազոտությունների, մաթեմատիկական մոդելավորման, մասնակիցների վարքագծի վերլուծության մեթոդները:

Գիտափորձի արդյունքների մշակման և վիճակագրական մաթեմատիկական մեթոդներ:

**Չետազոտության գիտական նորույթն է.**

- Դաստիարակության ոճերի գործառական և բովանդակային բնութագրերի բացահայտումը ներդարոցական կոնֆլիկտային իրավիճակների կանխման և հաղթահարման տեսանկյունից:

- Ներդարոցական կոնֆլիկտային իրավիճակների վերլուծությունը պրոբլեմային, պրոբլեմահարույց ուսուցման շրջանակներում՝ քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիաների և հոգեվերլուծական ռազմավարություն ապահովող ընթացակարգերի համակցմամբ:

- Ներդարոցական կոնֆլիկտային իրավիճակների կանխման և հաղթահարման մանկավարժական մոդելի ստեղծումը և հիմնավորումը:

**Չետազոտության տեսական նշանակությունն** այն է, որ ներդարոցական կոնֆլիկտային իրավիճակների կանխման և հաղթահարման արդյունավետ մոդելը կարող է նպաստել ներդարոցական դաստիարակության համակարգում նոր տեխնոլոգիաների բացահայտմանը և ստեղծմանը:

**Չետազոտության գործնական նշանակությունն** այն է, որ ատենախոսության հիմնական դրույթները և եզրակացությունները հիմք կարող են հանդիսանալ ներդարոցական դաստիարակության համակարգում համապատասխան մարտավարության մշակման, նոր ծրագրերի կազմման, ինչպես նաև տնօրենների և ուսուցիչների վերապատրաստման ժամանակ:

Մեր կողմից ստեղծված ներդարոցական կոնֆլիկտային իրավիճակների հաղթահարման արդյունավետ մոդելը, առաջարկվող մեթոդներն ու սկզբունքներն ուղղված են դարոցի տնօրենների, դաստիարակ-ուսուցիչների կազմակերպչական, կառավարման և ղեկավարման պահանջների բավարարմանը:

**Չետազոտության արդյունքների հավաստիությունը** ապահովվում է կիրառված հիմնադրույթներով և տեսականորեն և գործնականորեն հիմնավորվում է մեթոդների համալիր գործածությամբ, հետազոտության օբյեկտի և առարկայի դիֆակտիկական և մեթոդական առանձնահատկություններին համապատասխան, հետազոտության արդյունքում ստացված տվյալների հուսալիությամբ:

**Չետազոտության բազան են** հանդիսացել Գյումրի քաղաքի բժշկական քոլեջը, թիվ 7, 11, 12, 13, 19, 26, 29, 38, 40, 41 դպրոցները, ինչպես նաև Ազատանի միջնակարգ դպրոցը:

## **Չետագոտությունն իրականացվել է երեք փուլով.**

**Առաջին փուլում (2005-2007թթ.)** ընտրվել է հետազոտության թեման, որոշվել նպատակը և խնդիրները: Ուսումնասիրվել և տեսական վերլուծության ենթարկվել հետազոտության հիմնահարցին վերաբերող կոֆլիկտաբանական, փիլիսոփայական, մանկավարժական, հոգեբանական, հոգեվերլուծական գրականությունը:

**Երկրորդ փուլում (2007-2008թթ)** մշակվել են աշխատանքային վարկածը և ուսումնասիրության մեթոդները, կատարվել են դպրոցի տնօրենների, ուսուցիչների և աշակերտների փոխհարաբերությունների, զրույցների, անկետաների, հարցաշարերի նրանց աշխատանքի դիտում, վերլուծություն և ձեռք բերված նյութերի ամփոփում:

**Երրորդ փուլում (2008-2009)** կատարվել է տեսական և գործնական ճանապարհով կուտակված նյութի գիտական վերլուծություն, համակարգում և ընդհանրացում:

### **Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.**

1. Ներդպրոցական դաստիարակության համակարգի արդյունավետ գործունեությունը պայմանավորված է դաստիարակությունը իրականացնող մանկավարժների որդեգրած դեկավարման մարտավարությամբ, դաստիարակության գերիշխող ոճերով:

2. Դաստիարակության ոճերը դիմամիկ են և նրանց փոփոխության մեծ ազդեցություն է ունենում մանկավարժների մանկավարժական և հոգեվերլուծական ռեֆլեքսիայի աստիճանը:

3. Մանկավարժական կոնֆլիկտաբանության տարրագույն գիտելիքների առկայությունը կարևորագույն պայման է ոչ միայն դաստիարակ մանկավարժների արդյունավետ ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման, այլև աշակերտների ներաճձնային և միջանձնային հարաբերությունների կարգավորման:

4. Ներդպրոցական իրավիճակների կանխման և հաղթահարման արդյունավետ մոդելի հիմքում ընկած են մանկավարժական, հոգեվերլուծական և կոնֆլիկտաբանական տեխնոլոգիաները:

**Ատենախոսության ծավալը և կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից և երկու գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 142 էջ:

## ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԴԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածության** մեջ հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, սահմանվել են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, հետազոտության մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության՝ **«Կոնֆլիկտների տեսակները ներդարոցական դաստիարակության համակարգում»** խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ **«Կառավարման և դաստիարակության ոճերը ներդարոցական դաստիարակության համակարգում»** ենթագլխում, դիտարկված են ներդարոցական կառավարման համակարգում առկա կոնֆլիկտները, դրանց կանխման ուղիները, միջոցներն ու մեթոդները: Դիտարկված են կոնֆլիկտաբանության ակունքները և դրանց վերաբերյալ մի շարք հոգեբանների, մանկավարժների հայեցակարգային մոտեցումները:

Հիմնավորված է, որ կոնֆլիկտաբան-մանկավարժները, բացահայտելով կոնֆլիկտների առաջացման պատճառները, քիչ տեղ չեն տալիս պատմական, սոցիալական, մտածելակերպին, մշակութային, լեզվական, ընդհանուր առմամբ, ոչ միայն ներուսումնական, այլև արտաուսումնական գործոններին:

Կոնֆլիկտների հասարակագիտական տեսություններում կարևորվում է այն, որ փակ տիպի հասարակություններում գերիշխում է դաստիարակության ունիտար, ավտորիտար ոճերը, իսկ բաց տիպի հասարակություններում գերիշխում են ժողովրդավարական և ազատական ոճերը: Խնդիրն այն է, թե ինչպես են փոխվում կոնֆլիկտների բովանդակությունը և գործառույթները ըստ դաստիարակության վերոհիշյալ ոճերի:

Ակնհայտ է, որ «աշխատանքի արտադրողականության անկումը», գործազրկությունը, հավատի կորուստը, անորոշ վիճակը նույնպես կոնֆլիկտածին են:

Խոսելով կողմերի միջև փոխըմբռնման բացակայության մասին՝ կարելի է վստահորեն պնդել, որ ավտորիտար ոճի ուսուցչի կոնֆլիկտները կանխելու հնարավորությունները խիստ սահմանափակ են: Կարևոր է նախ և առաջ փոխըմբռնման մթնոլորտ ստեղծել: Ավտորիտար ոճի դաստիարակն ավելի շատ ոչ թե հարթում է կոնֆլիկտները, այլ կասեցնում է դրա զարգացումը տվյալ պահին,



տվյալ իրավիճակում: Նրա գործողությունները պարզ են, մոտեցումը՝ պարզունակ: Աշակերտները սկսում են ձևացնել, որ չեն ներգրավված կոնֆլիկտի մեջ: Արտաքին կոնֆլիկտի յուրահատուկ հետաձգում է տեղի ունենում ներքին կոնֆլիկտի ուժեղացման հաշվին:

Դժվար է պնդել, թե ժողովրդավարական ոճի դեպքում միանգամից փոխըմբռնման մթնոլորտ է ստեղծվում: Այդպիսի մթնոլորտի ստեղծումը պահանջում է բավականին երկար ժամանակ: Սակայն ժողովրդավարական ոճով աշխատող դաստիարակը վերջիվերջո հասնում է հաջողության, քանի որ նրա ռազմավարությունը ճիշտ է ընտրված: Նա ավելի շատ մտածում է համագործակցության աճի, և ոչ թե նվազման մասին կոնֆլիկտի ընթացքում և դրանից հետո:

Վերլուծելով սոցիալական կոնֆլիկտի գլխավոր դրական գործառնությունները՝ դաստիարակության ոճերի տեսանկյունից կարելի է ի հայտ բերվել մի շարք օրինաչափություններ:

Այս համատեքստում կոնֆլիկտաբանության վերաբերյալ վերլուծված են Զ.Ֆրեյդի, Կ.Յունգի, Է.Բեռնի, Գ.Ադլերի, Ա.Ա.Նալչաջյանի տեսությունները: Նշվում է, որ ներդպրոցական դաստիարակության համակարգում մեծ ուշադրություն է դարձվում միջանձնային կոնֆլիկտներին, երբ մի անհատը հակադրվում է մյուսին: Դպրոցի տնօրենը հակադրվում է փոխտնօրեններին կամ ուսուցիչներին, աշակերտները՝ աշակերտներին կամ ուսուցիչներին և այլն:

Ավտորիտար ոճի դաստիարակը միջանձնային կոնֆլիկտները փորձում է հարթել գերազանցապես ուժային մեթոդներով, առաջին պլան մղելով սուբորդինացիայի կամ ստորադասման սկզբունքի կիրառումը: Նրա համար կարևոր է իր գերադաս իշխող դիրքի պահպանումը: Թե ինչ է տեղի ունենում կոնֆլիկտի մեջ ներգրավված մասնակիցների զգացմունքների հետ, նրա համար էական չէ:

Ավտորիտար ոճի դաստիարակը փորձում է կիրառել հորդորի, համոզման մեթոդները:

Արդի փուլում դպրոցի տնօրենների, փոխտնօրենների և ուսուցիչների միջանձնային կոնֆլիկտների պատճառ լինում են ոչ միայն սոցիալական, հոգևոր, այլև նյութական արժեքները: Օպտիմալացման դժվարագույն գործընթացը պատճառ դարձավ բազում միջանձնային կոնֆլիկտների, որոնց օբյեկտը մեծ մասամբ նյութական և սոցիալական էր:

Դիտարկված են կոնֆլիկտաբանության մեջ հայտնի կոնֆլիկտի երեք միջավայրերը՝ ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական: Մեր հետազոտության համար կարևոր է կոնֆլիկտի ֆիզիկական միջավայրը ոչ թե մակրոմակարդակում, այլ միկրոմակարդակում: Կոնֆլիկտի ֆիզիկական միջավայրի ստեղծումը կազմված է ոչ միայն դպրոցի տնօրինությունից, ուսուցչական կոլեկտիվից, այլև տվյալ տարածաշրջանի տնտեսության, մշակութային զարգացման մակարդակից: Ուրիշ հարց է աղմուկի մակարդակի կարգավորումը, քանի որ լավ կարգուկանոնի առկայության դեպքում այն նվազում է: Ինչ վերաբերում է քաղաքային դպրոցներին, ապա դրանց մեծ մասը հեռու է աղմկոտ երթուղիներից:

Շատ կարևոր է դպրոցի ներուսումնական դաստիարակչական աշխատանքը կազմակերպելու համար կոնֆլիկտի հոգեբանական միջավայրի միկրոմակարդակը: Այդ մակարդակում կազմակերպության շրջանակներում կամ հասարակական-հոգեբանական միջավայրը տվյալ կոլեկտիվի հոգեբանական մթնոլորտն է, նրա ընդհանուր դրվածքը, որը կարող է առավել կամ նվազ չափով ուրախ կամ տխուր լինել, լավատես կամ հոռետեսական և այլն:

Մեր հետազոտության համար սկզբունքային նշանակություն ունի այն, թե դաստիարակության ոճը ինչպես է ազդում կոնֆլիկտի համապատասխան հոգեբանական միջավայրի ձևավորման վրա:

Ներդպրոցական դաստիարակչական աշխատանքի կազմակերպման գործընթացում մեծ նշանակություն ունի այն, որ կոնֆլիկտի մեջ ներգրավված անձինք ինչ հոգեբանական առանձնահատկություններ ունեն: Ինչպես ցույց տրվեց վերոշարադրյալ վերլուծության մեջ, դաստիարակության ոճի ընտրությունը պայմանավորված է ոչ միայն սոցիալական, այլև հոգեբանական գործոններով: Այս տեսանկյունից առաջին պլան են մղվում վարքագծի հիմնական հոգեբանական դրմինանտները:

Մեր հետազոտության առարկայի տեսանկյունից կարևորվում են թե՛ ուսուցիչների, թե՛ տնօրենների և փոխտնօրենների, թե՛ աշակերտների արժեքային կողմնորոշումները: Այստեղ մենք գործ ունենք բավականին բարդ իրադրության հետ: Պայմանականորեն մենք ուսուցիչներին բաժանում ենք երկու խմբի.

- 1) խորհրդային արժեքային կողմնորոշման,
- 2) ժողովրդավարական ազատական արժեքային կողմնորոշման:

Դիտարկումների արդյունքում եզրակացվել է, որ ներդպրոցական դաստիարակչական դժվար գործը կազմակերպելու համար անհրաժեշտ է

կոնֆլիկտերի կանխման և հաղթահարման խնդիրներին մոտենալ ոչ միայն հոգեբանության, ընդհանուր կոնֆլիկտաբանության, այլև վերջին շրջանում մեծ զարգացում ապրող մանկավարժական կոնֆլիկտաբանության տեսանկյունից: Ներդպրոցական կոնֆլիկտների և դաստիարակության ոճերի վերլուծությունը հաստատում է այն վարկածը, ըստ որի՝ դաստիարակության, կառավարման, ղեկավարման ոճի ընտրությունն ուղղակիորեն է ազդում կոնֆլիկտների ախտորոշման, կանխարգելման և հաղթահարման գործընթացների վրա:

Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքում առաջացող դրդապատճառները շատ դեպքերում կարելի է դիտարկել սոցիալական կոնֆլիկտի մակրոմակարդակում, այն դեպքում, երբ մանկավարժների և աշակերտների միջև առաջացող կոնֆլիկտները անհրաժեշտ է դիտարկել նախ և առաջ կոնֆլիկտի հասարակական հոգեբանական միկրոմակարդակում, այսինքն՝ միջխմբային և միջանձնային մակարդակներում:

Յետազոտությունները ցույց տվեց, որ կա ուղղակի կապ կոնֆլիկտների հանգուցալուծման մարտավարությունների ընտրության, կառավարման և ընդհանրապես դաստիարակության ոճերի միջև: Դաստիարակության ոճերը, ինչպես և կոնֆլիկտները դիտարկվում են գիտնականների կողմից տարբեր տեսանկյուններից՝ փիլիսոփայական, հոգեբանական, կոնֆլիկտաբանական, մանկավարժական և այլն:

Դիտարկված են դպրոցի կառավարման ոճերի վերաբերյալ հոգեբանական հայեցակարգերը: Տրված է կառավարման ավտորիտար, ժողովրդավարական, ազատական, բարձիթողի ոճերի բնութագիրը:

Երկրորդ ենթագլխում՝ **«Անհատների խառնվածքի տիպերը և դաստիարակության ոճերը»** նշվում է, որ ներդպրոցական կոնֆլիկտների կանխման և հաղթահարման ռազմավարություն մշակելիս կարևորվում է, թե դաստիարակության ինչ կաղապարներ և ոճեր են գերիշխում տվյալ կրթական տարածքում: Մանկավարժագետները և հոգեբանները մեծ հաջողությունների են հասել դաստիարակության հիմնական հարացույցները դասակարգելու ուղղությամբ: Նրանք հիմնականում առանձնացնում են դաստիարակության հասարակական, կենսաբանական և դաստիարակչական գործոնները:

Ավտորիտար, ժողովրդավարական, ազատական և բարձիթողի ոճերի տեսանկյունից դիտարկված են դաստիարակների էքստրավերտ, ինտրովերտ խառնվածքի տիպերը:

Անհատի խառնվածքի չորս տիպերի վերլուծությունը և համեմատությունը դաստիարակության ոճերի բնութագրերի հետ ի հայտ է բերում ամեն մի ոճին համապատասխանող կոնֆլիկտների կանխման և հարթման մարտավարությունն ու ռազմավարությունը:

Կոնֆլիկտաբանական մանկավարժությունն իր զարգացման տարբեր փուլերում հաշվի է նստում հոգեբանական այն տեսությունների և գիտափորձարարական տվյալների հետ, որոնք ուղղակիորեն առնչվում են կոնֆլիկտների կանխման և հաղթահարման հետ:

Կոնֆլիկտների կանխման և հաղթահարման կաղապար մշակելիս, կարևորվում է հույզերի բարդույթները և անձի հուզական գծերը:

Գաղտնիք չէ, որ դաստիարակ-ուսուցիչների մեծ մասը շրջապատի կողմից ընդունվում է որպես հուզական բարդույթ ունեցող անձինք, իրենց բնորոշ որոշակի հուզական գծերով: Հոգեբանները վստահ են, որ անձի հուզական գծերի ախտորոշումը շատ էական է համապատասխան կառավարման համակարգ ստեղծելու համար:

Հատկանշական է, որ հոգեբանությունում ցանկացած տագնապի դրսևորում կարող է կոնֆլիկտի պատճառ դառնալ: Ուսուցիչները պետք է կարողանան ժամանակին ախտորոշել իրենց և աշակերտների տագնապները: Ճնշվածությունը նույնպես կարող է կոնֆլիկտների պատճառ դառնալ: Սակայն դպրոցականները հիմնականում չեն կարողանում մեծահասակների նման թաքցնել կամ զսպել ճնշվածությունը արտահայտելու ցանկությունը:

Հատկանշական է այն, որ հոգեբանության մեջ սերը նույնպես դիտարկվում է որպես հուզական բարդույթ, որն ավելի շատ կառուցողական բնույթ ունի: Սակայն այն կարող է լինել ավերիչ, կոնֆլիկտածին ուղղակի և անուղղակի իմաստներով: Շատ դեպքերում, դպրոցականները սերը ինքնահաստատման միջոց են համարում, ընդ որում՝ այդ ինքնահաստատումը կարող է տեղի ունենալ ոչ միայն շրջապատի, այլև սիրո օբյեկտի հաշվին և ուղեկցվել տարբեր բնույթի բռնություններով:

Թշնամությունը նույնպես հուզական բարդույթ է, որի մեջ մտնում են զայրույթը, զզվանքն ու արհամարհանքը:

Մանկավարժները հիմնականում կոնֆլիկտածին են համարում թշնամությունը և ագրեսիան, իսկ մյուս հուզական բարդույթների դերը թերագնահատում են: Նրանց կարծիքով, եթե մարդիկ իրար ուղղակիորեն չեն վիրավորում, վնաս պատճառում, ապա կոնֆլիկտների առաջացման հավանականությունը այնքան էլ մեծ չէ: Սակայն,

Ներդպրոցական կառավարման կադապար ստեղծելիս, անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր նշված հուզական բարդությունների տեսակները և ամեն անգամ ծագող կոնֆլիկտներին մոտենալ շատ մեծ զգուշությամբ, եթե խոսքը վերաբերում է նրանց ախտորոշման մասին:

Ցանկացած ոճի մանկավարժ չի կարող խուսափել կոնֆլիկտի եսկալացիայից:

Երբ վերլուծում ենք կոնֆլիկտի եսկալացիայի փուլը բնութագրող հիմնական պահերը՝ 1) թշնամու կերպարի ստեղծումը, 2) ուժի ցուցադրումը և կիրառելու սպառնալիքը, 3) բռնության գործադրումը, 4) կոնֆլիկտը ընդլայնելու և խորացնելու միտումը, ապա հստակորեն կարող ենք ասել, որ այդ բոլոր գծերը բնորոշ են նախ և առաջ ավտորիտար ոճի մանկավարժներին:

Ելնելով վերոբերյալ դիտարկումներից՝ մենք կարծում ենք, որ կոնֆլիկտները կարող են ավելի քիչ լինել, պակասել, եթե մանկավարժները լիովին պատկերացնեն դրանց առաջացման դինամիկան մարդու կենսափիլիսոփայության տեսանկյունից:

**Երրորդ՝ «Մանկավարժական կոնֆլիկտաբանության ուսումնասիրության սկզբունքները» ենթաօլիտում** հիմնավորվում է, որ դիտարկված են մանկավարժական կոնֆլիկտաբանության վերաբերող համակարգային-կառուցվածքային, համակարգային-գործառական, համակարգային-գենետիկական, համակարգային-տեղեկատվական մոտեցումները:

Նշվում է, որ համակարգային-գործառական վերլուծության տեսանկյունից կոնֆլիկտները լինում են կառուցողական և ապակառուցողական:

Համակարգային-գենետիկական վերլուծությունն ի հայտ է բերում կոնֆլիկտների զարգացման և դինամիկայի շարժիչ ուժերը: Սկզբունքային նշանակություն ունի այն, որ ներդպրոցական, ներուսումնական կառավարման և դաստիարակության գործընթացում կոնֆլիկտները բացահայտվում են միկրո-և մակրո միջավայրերի գործոնները:

Կոնֆլիկտների համակարգային-իրադրական վերլուծության միավոր է կոնֆլիկտային իրադրությունը, որը ներդպրոցական, ներուսումնական կառավարման և դաստիարակության գործընթացում առանցքային տեղ է գրավում:

Առավել արդյունավետ են կոնֆլիկտային իրավիճակների բացահայտման, նկարագրման և կանխարգելման գործում հումանիստական սկզբունքները: Մանկավարժական կոնֆլիկտաբանության մեջ առանձնանում են զարգացման, գիտափորձի և պրակտիկայի համընդհանուր կապի, համակարգային մոտեցման, կոնկրետ պատմական մոտեցման, օբյեկտիվության հումանիստական սկզբունքները

են: Կոնկրետ կոնֆլիկտաբանության սկզբունքներին են վերաբերում միջգիտակարգայնության, հաջորդականության, էվոլյուցիաների, անձնային մոտեցման սկզբունքները:

Ներդպրոցական կոնֆլիկտների կանխարգելման և հարթման գործընթացում մեծ նշանակություն է ձեռք բերում համակարգային-տեղեկատվական վերլուծությունը:

Հիմնավորվում է, որ կոնֆլիկտային իրավիճակների կանխումն ու հաղթահարումը ներդպրոցական դաստիարակության համակարգում պահանջում է կադապարել կոնֆլիկտային իրավիճակների կանխումն ու հաղթահարումը ըստ կառավարման և դաստիարակության ոճերի և կադապարների (ավտորիտար, դեմոկրատ, ազատ, բարձիթողի, մանիպյուլատիվ և այլն): Ինչպես արդեն նշվեց վերը հետազոտության առաջադիր խնդիրներից է կոնֆլիկտային իրավիճակների դինամիկան բացահայտելը և կոնֆլիկտները կանխարգելու և հարթելու մանկավարժական և հոգեբանական տեխնոլոգիաների վրա հիմնված նոր համակարգ մշակելը:

Նշվում է, որ համակարգելով ներդպրոցական դաստիարակության համակարգում կոնֆլիկտների ախտորոշման, կանխատեսման բովանդակային և գործառնական ընթացակարգերը և մշակելով նրանց կանխման և հարթման դիդակտիկական մեթոդիկա՝ հնարավոր է նոր, ռեֆլեքսիվ մակարդակի վրա դնել ներդպրոցական կոնֆլիկտների հաղթահարման դժվար գործը:

Հաշվի առնելով կոնֆլիկտների ուսումնասիրման մեթոդների և ընթացակարգերի առանձնահատկությունները՝ առաջարկվում են այն հիմնական քայլերը, որոնք ընկած են նշված ընթացակարգերի հիմքում:

Առաջին քայլը վերաբերում է նախնական կոնֆլիկտային տեղեկատվության հավաքմանը, որը վերաբերում է ուսուցիչների և տնօրինության միջև, ուսուցիչների միջև, ուսուցիչների և աշակերտների, աշակերտների և աշակերտների միջև ծագող ամենօրյա կոնֆլիկտներին:

Եզրահանգվում է, որ ներդպրոցական դաստիարակչական դժվար գործը կազմակերպելու համար անհրաժեշտ է կոնֆլիկտների կանխման և հաղթահարման խնդիրներին մոտենալ ոչ միայն հոգեբանության, ընդհանուր կոնֆլիկտաբանության, այլև վերջին շրջանում մեծ զարգացում ապրող մանկավարժական կոնֆլիկտաբանության տեսանկյունից:

Ղաստիարակության ոճի ընտրությունը պայմանավորված է ոչ միայն սոցիալական, այլև հոգեբանական գործոններով:

Ատենախոսության «**Կոնֆլիկտները մանկավարժական գործընթացում**» խորագիրը կրող երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

**Առաջին՝ «Կոնֆլիկտների հանգուցալուծման մանկավարժական պայմանները»**, խորագրով ենթագլխում դիտարկված են կոնֆլիկտների տեսակները մանկավարժական գործընթացում, ուսուցչի կողմից կոնֆլիկտների կառավարման մեթոդները: Առանձնապես վերլուծված են ներդպրոցական կառավարման տարբեր օղակներում, կարևորվում է այսպես կոչված միջանձնային նորարական կոնֆլիկտը, որը ենթադրում է հակազդեցություն նորամուծության կողմնակիցների և հակառակորդների միջև, որը ուղեկցվում է մեկը մյուսի հանդեպ բացասական զգացմունքների արտահայտմամբ: Միջանձնային նորարական կոնֆլիկտների պատճառները կարելի է միավորել հինգ խմբի մեջ.

Օբյեկտիվ պատճառները նորարարների և պահպանողականների միջև բնական շահերի բախումն է: Նորամուծությունների կողմնակիցները միշտ եղել են, կան և կլինեն անկախ որևէ այլ գործոններից: Այդ պատճառներն ունեն և՛ կազմակերպչական, և՛ կառավարչական բնույթ: Նորարական պատճառները բացատրվում են նորամուծության բնութագրերով: Տարբեր նորամուծությունները ծնուն են ըստ քանակի և սրության տարբեր կոնֆլիկտներ:

Բավականին մեծ նշանակություն ունեն անձնային բնույթի կոնֆլիկտները: Անձնային պատճառները բացատրվում են մասնակիցների անհատական-հոգեբանական առանձնահատկություններով: Նորարական կոնֆլիկտների տիպական անձնային պատճառները բացատրվում է կոնֆլիկտի մեջ ներգրավված մասնակիցների վառ արտահայտված բացասական դիրքորոշման առկայությամբ, ովքեր դեմ են որևէ փոփոխության ընդհանրապես և նորարարության՝ մասնավորապես որևէ կոնկրետ գործունեության ոլորտում:

Ներկայացված են միջանձնային նորարական կոնֆլիկտների լուծման հիմնական խնդիրները և աշակերտների միմյանց վրա ազդեցության եղանակները:

**Երկրորդ ենթագլխում «Ներդպրոցական ղաստիարակության համակարգում կոնֆլիկտների հանգուցալուծման ծրագրերի բովանդակությունը և գործառույթները»**, հիմնավորվում է, որ ղաստիարակներն ու մանկավարժներն համարյա միշտ ստիպված են լինում լուծել իրենց և ուրիշների խնդիրները կոնֆլիկտային իրավիճակներում: Եվ նրանք, անկախ այն բանից, ուզում են թե ոչ,

կատարում են ռեֆլեքսիայի տարբեր մակարդակներում հաշտեցնողի, խաղաղարարի դեր, սակայն այստեղ խոսք է գնում այն հաշտեցնողի մասին, ով կոնֆլիկտաբանական իրազեկություն ունի, այսինքն՝ ունի տարրական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ կոնֆլիկտները, կանխելու, հարթելու և այլն:

Վերլուծված են կոնֆլիկտային կողմերի հաշտեցման համար անհրաժեշտ հմտությունների և մարտավարության տեսակները:

Ելնելով հետազոտության ընդհանուր բովանդակությունից՝ կարևորված և բնութագրված են կոնֆլիկտաբանական իրազեկության մակարդակները:

Կասկած չկա, որ թե կոնֆլիկտը հարթելու նպատակ հետապնդող անձը պետք է հաշվի առնի նրա մեջ ներգրավվածների կոնֆլիկտաբանական իրազեկության մակարդակը: Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել հետևյալ մակարդակները.

1-ին մակարդակ թե՛ դաստիարակները, թե՛ աշակերտները կոնֆլիկտները հաղթահարում են ներընթացողական մակարդակում,

2-րդ մակարդակ դաստիարակները տիրապետում են ինչ-որ չափով կոնֆլիկտաբանական գիտելիքներին, աշակերտները՝ ոչ,

3-րդ մակարդակ թե՛ առաջինները, թե՛ երկրորդները տիրապետում են, պատկերացում ունեն, ունեն ցանկություն, ունեն փորձ կոնֆլիկտ հաղթահարելու,

4-րդ մակարդակ դպրոցի դաստիարակության համակարգի կառուցողական կոնֆլիկտների կառավարման գործընթաց, որի ընթացքում աստիճանաբար թե՛ դաստիարակները, թե՛ աշակերտները յուրացնում է, «խաղաղարար մարտավարության», «խաղաղ համագործակցության» մեթոդներն ու միջոցները, ավելի հումանիտար ցիկլի առարկաներն ուսումնասիրում են (գրականություն, պատմություն, օտար լեզուներ, իրավունք), առանձնացնելով կոնֆլիկտաբանական հայեցակետը:


Հիմնավորվում է աշակերտների կողմից կոնֆլիկտները հասկանալու հմտությունների ձեռքբերման և դրանց հանգուցալուծման արդյունավետ միջոցների կիրառման հմտությունների տիրապետման անհրաժեշտությունը՝ ըստ տարիքային խմբերի:

Այդ խմբի լուծման համար մեր կողմից առաջարկվել է հաշտեցման հմտությունների ուսուցման ծրագիրը, որը կարող է ներդրվել դպրոցի ամենօրյա կյանքում:

**Երրորդ ենթագլխում** «Կոնֆլիկտահարթիչ տեխնոլոգիաների



արդյունավետության գիտափորձնական հիմնավորումը» ներկայացված է մեր կողմից մշակված կոնֆլիկտահարթիչ տեխնոլոգիայի բովանդակությունը /գծապատկեր 1/:



Հաշվի առնելով ներկայացված կաղապարի հիմնական բաղադրամասերը՝ փորձ է արվել հիմնավորել նրա արդյունավետությունը և առաջադրված նախնական վարկածի հավաստիությունը:

Դպրոցներում կատարված բազմաթիվ հարցումներով փորձ է արվել հիմնավորել հետազոտության արդյունքում առաջադրված տեսական դրույթները: Հարցման են ենթարկվել 125 ուսուցիչներ, տնօրեններ և փոխտնօրեններ: Հարցման նպատակն է եղել բացահայտել նրանց կոնֆլիկտային իրավիճակների նարտավարության ունակությունները:

Ներկայացված են տնօրեններին, փոխտնօրեններին, ուսուցիչներին առաջադրվող հարցաշարերը, և կատարված փորձարարական ուսումնասիրության արդյունքների վիճակագրական և նախենատիկական վերլուծությունը աղյուսակների և դիագրամների տեսքով:

Մեր հետազոտության համար սկզբունքային նշանակություն ունի այն, թե ղատահականության ոճն ինչպես է ազդում կոնֆլիկտի համապատասխան հոգեբանական միջավայրի ձևավորման գործում: Հարցում է կատարվել թե՛

ուսուցիչների, թե՛ աշակերտների շրջանում, որի նպատակն է եղել՝ պարզել, թե հարցման ենթարկված 100 ուսուցիչների քանի տոկոսն է ուրախ, կենսախիճ, լավատես, և քանի տոկոսը՝ տխուր և հոռետես:

Հարցման երկրորդ փուլում փորձել են պարզել ավտորիտար և ժողովրդավարական ոճի դաստիարակներն ավելի շատ լինում են ուրախ, լավատե՞ս, թե՞ տխուր և հոռետես:

Գյուճարիի թիվ 7, 11, 12, 13, 19, 26, 29, 38, 40, 41 դպրոցներում անցկացրած գիտափորձը հաստատեց հետազոտության նախնական վարկածը, ըստ որի՝ Գյուճարիի հանրակրթական դպրոցների տնօրենների 57%-ը և ուսուցիչների 68%-ը ավտորիտար ոճի մանկավարժներ են: Լավատես են հարցման ենթարկված տնօրենների 61% և ուսուցիչների՝ 36%-ը: Հոռետես են հարցման ենթարկված տնօրենների 39%, ուսուցիչների՝ 64%:

Ընդհանուր առմամբ, Գյուճարիի ուսուցիչների շրջանում գերակշռում է վախի, անվստահության և անհանգստության զգացումները, որը բացատրվում ուսուցիչների է օպտիմալացման հետևանքով, համրապետությունում առկա գործազրկության բարձր մակարդակով, արտագաղթի տեմպերով:

Հասարակական հոգեբանության միջավայրի այդպիսի տեսակը նպաստում է կոնֆլիկտային վարքագծին: Ժողովրդավարական և ազատական ոճի դաստիարակների թիվը կտրուկ աճում է երկրորդ հոգեբանական միջավայրի միկրոմակարդակում: Փաստորեն հոգեբանական տրամադրությունը /հանգստություն, հավասարակշռվածություն/ թե՛ մակրո- և թե՛ միկրոմակարդակներում բավականին ցածր է: Դա չի կարող չազդել ներուսումնական դաստիարակչական աշխատանքի կազմակերպման վրա:

Տնօրենների 33 %-ը և ուսուցիչների 72%-ը բավականին հաճախ են ունենում անարդարության ականատեսի զգացում: Անոթի զգացում երկրի ներկա վիճակի համար ունենում են տնօրենների 34 %-ը և ուսուցիչների՝ 75%-ը: Կյանքն այսպես շարունակելու անհնարինության զգացումը բնորոշ է՝ տնօրենների 27 %-ին և ուսուցիչների 68%-ին: Միայնակության և ոչ մեկին պիտանի չլինելու զգացումը բնորոշ է տնօրենների 12 %-ին և ուսուցիչների 29%-ին:

Հետաքրքիրն այն է, որ միայնակության և ոչ մեկին պիտանի չլինելու զգացումը ավելի ցածր է գյուճարցիների մոտ: Դա բացատրվում է հավանաբար հայկական ավանդապահ ընտանիքների ամրությամբ, համապատասխան արժեքային համակարգով, արտագնա աշխատողների նվիրական աշխատանքով, մարզինալ

իրավիճակներում հոգեբանական փոխհատուցման մեխանիզմների առանձնահատկություններով և այլն:


Գիտափորձի ընթացքում կիրառվել է են թեստեր տնօրենների ղեկավարման ոճերը պարզելու համար: Կարևորն այն է, որ թեստի արդյունքների քննարկումներին մասնակցում են հարցման ենթարկված տնօրենները:

Ստացված արդյունքների ամփոփումը ցույց տվեց, որ հարցման ենթարկված տնօրեններից 71 % հակված էք ավտորիտար կառավարման ոճին, 12%-ը՝ ժողովրդավարական կառավարման ոճին, 10%-ը՝ ազատական և 7 %-ը հակված են բարձիթողի ոճին:

Համապատասխան սեմինարների անցկացման արդյունքում նշված արդյունքները փոխվեցին՝ համապատասխանաբար՝

- ավտորիտար ոճ - 37%
- ժողովրդավարական ոճ - 39%
- ազատական ոճ - 25%
- բարձիթողի ոճ- 9%

	Փորձարական խումբ N – 25		Ստուգողական խումբ N – 25	
	Գիտափորձի սկզբում	Գիտափորձի վերջում	Գիտափորձի սկզբում	Գիտափորձի վերջում
Ավտորիտար ոճ	71	27	76	74
Ժողովրդավարական ոճ	12	39	13	15
Ազատական ոճ	10	25	9	6
Բարձիթողի ոճ	7	9	2	5



Նշված տվյալների հիման վրա չի կարելի եզրահանգել, թե գիտափորձի վերջում տնօրենները կարողացան փոխել իրենց ոճը: Սակայն ակնհայտ է, որ նրանք կարողացան որոշ չափով փոխել իրենց վերաբերմունքը ոճերի մասին, որը հիմք կարող է հանդիսանալ հետագա աշխատանքում շատ պատկերացումներ և մոտեցումներ, ձևավորված կարծրատիպեր վերանայելու և հաղթահարելու համար:

Իրականացված գիտափորձը Ազատանի միջնակարգ դպրոցում և Գյումրի քաղաքի 7, 26, 40, 41 դպրոցներում տվեց բավականին բարձր արդյունքներ: Տնօրեններին և ուսուցիչներին բաժանվել է համապատասխան կոնֆլիկտաբանական գրականություն և գրականության ցանկ հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով: Բոլոր նշված դպրոցներում մենք հանդես ենք եկել զեկուցումներով, անցկացրել ենք հարցում՝ հիմնականում փակ:

Գիտափորձի մյուս նպատակը, ինչպես արդեն նշվեց վերը ուսուցողական-ձևավորող է, և հետազոտության արդյունքների վերլուծությունը ևս մեկ անգամ հաստատում է այն դրույթը, ըստ որի ներդրողական դաստիարակության համակարգում թե՛ տնօրենները, թե՛ ուսուցիչները, թե՛ աշակերտներն ու ծնողները պետք է շարունակաբար ներգրավվեն կոնֆլիկտաբանական գիտելիքների շարունակական զարգացման և խորացման գործընթացի մեջ: Ընդ որում, չի կարելի թերագնահատել նշված օղակների որևէ մեկի դերը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը մեզ հնարավորություն է ընձեռում անելու հետևյալ **եզրակացությունները**.

1. Ներդրողական կոնֆլիկտների և դաստիարակության ոճերի վերլուծությունը հաստատում է այն վարկածը, ըստ որի՝ դաստիարակության, կառավարման, ղեկավարման ոճի ընտրությունը ուղղակիորեն է ազդում կոնֆլիկտների ախտորոշման, կանխարգելման և հաղթահարման գործընթացների վրա:

2. Ներդրողական դաստիարակչական աշխատանքի կազմակերպման գործընթացում էական նշանակություն է ձեռք բերում կոնֆլիկտի մեջ ներգրավված անձանց հոգեբանական առանձնահատկությունները:

3. Կոնֆլիկտները դպրոցական կյանքում անխուսափելի են: Եթե հոգեբանները փորձում են թուլացնել կոնֆլիկտների լարումը և մեղմել դրա հետևանքով առաջացած տառապանքներն ու հույզերը, ապա մանկավարժներն լուծում են հատուկ ուսումնադաստիարակչական խնդիրներ:

4. Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքում առաջացող դրոշապատճառները պետք է դիտարկել սոցիալական կոնֆլիկտի մակրոմակարդակում: Իսկ մանկավարժների և աշակերտների միջև առաջացող կոնֆլիկտները՝ անհրաժեշտ է դիտարկել կոնֆլիկտի հասարակական հոգեբանական միկրոմակարդակում, այսինքն՝ միջխմբային և միջամծային մակարդակներում:

5. Կոնֆլիկտաբան-մանկավարժները գտնում են, որ հիմնականում նորամուծության գնահատման և ներդրման մեխանիզմները կարող են լինել կոնֆլիկտածին: Ակնհայտ է, որ ներդպրոցական դաստիարակության համակարգում միայն տնօրինությունը, կամ ուսուցչական կոլեկտիվի կողմից կոնֆլիկտների կառավարումը չի կարող արդյունավետ լինել, եթե կոնֆլիկտները հարթելու և կանխելու պարզագույն գիտելիքներ չունեն աշակերտները:

6. Այն դպրոցներում, որտեղ ներդրվում են միջնորդության ծրագրեր, սովորողներն ավելի հանդուրժող են դառնում այլ մարդկանց, մշակույթների և էթնիկական խմբերի նկատմամբ: Կարևոր խնդիր է հաշտեցնողներին ընտրելը այն դպրոցական կոլեկտիվներում, որտեղ գերիշխում է հովանավորչության և կողմնակալության մթնոլորտը: Սխալ միջնորդի «ճանակումը» կամ «ընտրությունը» կարող է հանգեցնել նոր կոնֆլիկտների առաջացման:

7. Խնդիր է նաև այն, թե տվյալ դպրոցն ինչքանով է պատրաստ «հաշտեցման» մեխանիզմի ներմուծմանը՝ թե՛ կադրերի, թե՛ հաղորդակցական և կոնֆլիկտային իրազեկության, թե՛ կառավարման, դաստիարակության ոճերի և թե՛ նյութատեխնիկական բազայի առկայության առումներով: Ակնհայտ է, որ առարկայական լավ գիտելիքների, այսինքն՝ մասնագիտական իրազեկության առկայությունը դեռևս կոնֆլիկտային իրազեկության գրավական չէ:

8. Կարևորագույն խնդիր է կառավարման և դաստիարակության ոճի խնդիրը, քանի որ «հաշտեցման ինստիտուտը», «խաղաղարար» կամ «խաղաղասեր» մարտավարություններն անհրազործելի են, եթե կոլեկտիվի անդամների գերակշռող մասը ժողովրդավարական կամ ազատական ոճի դաստիարակներ չեն:

9. Բարենպաստ սոցիալ-հոգեբանական պայմանների ստեղծումը կարևորագույն նախադրյալ է ներդպրոցական դաստիարակության համակարգում կոնֆլիկտակամխիչ և կոնֆլիկտահարթիչ գործունեության: Ժամանակին և արհեստավարժորեն կանխած և հարթած կոնֆլիկտները նպաստում են ոչ միայն

միջանձնային, միջխմբային հարաբերությունների բարելավմանը, այլև ընդհանրապես ուսուցման և ուսուցման բարդ և աշխատատար գործընթացին:

10. Հետազոտության արդյունքում բացահայտվեց, որ տեսական մակարդակում հնարավոր է իրականացնել տնօրենների, ուսուցիչների, աշակերտների և ծնողների ներդաշնակ, փոխկապակցված համագործունեություն: Սակայն, գործնականում, նշված աշխատանքի հաջողությունը պայմանավորված է բազում գործոններով: Անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ դպրոցի համակազմի քանակը, աշխարհագրական դիրքը /գյուղական, քաղաքային, կին և տղամարդ ուսուցիչների հարաբերակցությունը և փոխհարաբերությունները, աշակերտների թվաքանակը, նրանց ծնողների սոցիալական կարգավիճակը, մեզա - և մեզոգործոնները, դաստիարակության միկրո - և մակրոմակարդակները, արժեքային համակարգը, հավատալիքները և այլն:

Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Կոնֆլիկտների հաղթահարումը ներդպրոցական դաստիարակության համակարգում: «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ, 2007թ., N 2, էջ 92-95:

2. Դաստիարակության ոճերը ներդպրոցական կոնֆլիկտների հաղթահարման գործընթացում: «Մանկավարժական միտք» հանդես, 2008, 1, էջ 147-152

3. Կոնֆլիկտները մանկավարժական գործունեության մեջ: ՀՊՄՀ ժողովածու նվիրված հիմնարդման 85-ամյակին, I Պրակ, Երևան 2008, էջ 53-56:

4. Կոնֆլիկտային իրավիճակների հաղթահարումը ներդպրոցական դաստիարակության համակարգում/խմբ. Ի. Կարապետյան. - Եր.: Արտագերս, 2013.

– 78 էջ:

**ФАРЗАДЯН ЭРМИНЕ БАГРАТОВНА**  
**ПРЕОДОЛЕНИЕ КОНФЛИКТНЫХ СИТУАЦИЙ В СИСТЕМЕ**  
**ВНУТРИШКОЛЬНОГО ВОСПИТАНИЯ**

**РЕЗЮМЕ**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 - “Теория и история педагогики”

Защита диссертации состоится 26-го сентября 2013 г. в 14<sup>00</sup> на заседании специализированного совета по педагогике 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010 г. Ереван. Ул. Тиграна Меца 17.

**Актуальность исследования.**

Внутришкольная система воспитания не формируется в короткий отрезок времени и в рамках одной, конкретной парадигмы (социетарный или биологический, в том плане, что на первый план выступают генетические факторы или среда) или преобладает один стиль воспитания (авторитарный, демократический, либеральный).

На формирование внутришкольной системы воспитания воздействуют не только внутриучебные факторы. В данном контексте большое значение имеет выяснение динамики стилей управления и воспитания.

Важным условием эффективности работы в внутришкольной системе воспитания является наличие педагогической и психологической рефлексии у воспитателей. Педагог должен быть компетентным. Он должен иметь общее представление о социальных, психологических, педагогических подходах к организации внутришкольной воспитательной системы.

Фактически, важными компонентами управления школы являются улажение и предотвращение, а также управление конфликтами.

**Цель исследования**

Раскрыть психологические и педагогические особенности воспитательных стилей педагогов и разработать педагогическую модель предотвращения и преодоления конфликтных ситуаций в системе внутришкольного воспитания.

**Задачи исследования.**

1. Изучить современные теории, относящиеся к стилям, методам и формам воспитания.

2. Выявить педагогические, психоаналитические, социологические, психологические основы предотвращения и преодоления конфликтных ситуаций в системе внутришкольного воспитания.

3. Обосновать предложенные процедуры по предотвращению и улажению конфликтных ситуаций, в частности педагогические технологии, методы и формы.

4. Создать эффективную модель предотвращения и улажения внутришкольных конфликтов и разработать методику по профилактике и преодолению конфликтных ситуаций в системе внутришкольного воспитания.

#### **Научная новизна исследования.**

Определены функциональные и содержательные характеристики стилей воспитания с точки зрения профилактики и преодоления внутришкольных конфликтных ситуаций. Проанализированы конфликтные ситуации в рамках проблемного обучения и воспитания.

Создана и обоснована педагогическая модель профилактики и преодоления внутришкольных конфликтных ситуаций.

#### **Теоретическое значение исследования**

Предложенная модель по профилактике и преодолению конфликтных ситуаций может способствовать выявлению и созданию новых воспитательно-управленческих технологий по предотвращению и преодолению конфликтных ситуаций в системе внутришкольного воспитания.

#### **Практическое значение исследования.**

Основные положения и выводы диссертационного исследования могут стать основой разработки соответствующей стратегии в системе внутришкольного воспитания, а также составления новых программ. Они могут быть использованы в курсах повышения квалификации учителей, директоров школ.

#### **Апробация результатов исследования.**

Достоверность результатов исследования обеспечена методологическим обоснованием исходных положений; применением комплекса методов, адекватных целям и задачам исследования; анализом специальной литературы по избранной проблеме; репрезентативностью экспериментальных данных, анкетных методик; сочетанием количественного и качественного анализа материала; возможностью повторения экспериментальной программы.

Основные положения диссертации были обсуждены на различных этапах эксперимента, на заседании кафедр общей педагогики АГПУ им. Х. Абовяна.

#### **Объём и структура диссертации**

Диссертация, которая состоит из введения двух глав, заключения, библиографии и приложений. Объём работы - 142 страниц.

По теме диссертации опубликована одна монография и 3 статьи.



OVERCOMING CONFLICT SITUATIONS IN THE SYSTEM OF INTRASCHOOL  
EDUCATION

Thesis for degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.01 –"Theory and History of Pedagogy".

The defense of the thesis will be held in September 26, at 14<sup>00</sup>, 2013 at the session of the Special Board 020 HAC (Higher Attestation Commission) to award degrees under the Armenian State Pedagogical University. After Kh. Abovyan, address: 0010, st.Tigran Mets 17, Yerevan.

SUMMARY

**The relevance of the research**

Intraschool educational system is not formed in a short period of time and in a single, specific paradigm (societal or biological, when genetic factors or environment are placed in the forefront) or when one style prevails (authoritarian, democratic, liberal, neglected).

The formation of intraschool education system is influenced by academic and out-of-curriculum factors. In this context, it is of great importance to elucidate the dynamics of management and education.

An important condition for the effectiveness of the intraschool education system is the presence of educational and psychological reflection of the teachers: The teacher must be competent. He or she should have a basic understanding of the social, psychological, and pedagogical approaches to the organization in intraschool educational system.

In fact, the important components of the school management are arrangement, prevention and management of conflicts.

**The aim of the research** is to reveal the psychological and pedagogical features of educational styles of teachers and develop a pedagogical model of preventing and solving conflicts intraschool educational system.

**The objectives of the research:**

1. To examine the current theories relating to the styles, methods and forms of education.
2. To identify educational, psychoanalytic, sociological, psychological foundations of prevention and resolution of conflicts.

3. To substantiate the proposed procedures for the prevention and managing conflicts, particularly educational technology, methods and forms.
4. To create an effective model of preventing and managing intraschool conflicts and to develop a methodology for preventing and overcoming conflicts.

#### **The scientific novelty of the research**

It defines functional and content characteristics of educational styles in terms of preventing and overcoming intraschool conflict situations. It analyzes the conflicts in the framework of problem-based learning and education when the technologies of developing critical thinking relate to procedures providing psychoanalytic strategy.

It establishes and proves the pedagogical model for preventing and overcoming intraschool conflict situations.

#### **The theoretical value of the research**

The proposed model for preventing and overcoming conflict situations can contribute to identifying and creating new educational and management technologies to prevent and overcome conflicts.

#### **The practical significance of the research**

The main points and conclusions of the dissertation research may be the basis for the development of appropriate strategies in the intraschool education system, as well as making up new programs, lesson plans and so on. They can be used in teacher and school principal training courses.

#### **Exploration of the research results:**

The main points of the study were discussed at the sitting of the department of general pedagogy in ASPU after Kh. Abovyan.

The test results reveal the main features of the proposed model of managing, preventing intraschool conflicts. They are incorporated in the methodology of preventing and managing conflicts in different intraschool educational situations. The main findings of the research were put into practice in Giumry secondary schools 7, 11, 12, 13, 19, 26, 29, 38, 40, 41 and medical college.

The content of the study is reflected in the structure of the thesis, which consists of the introduction of two chapters, conclusion, bibliography and appendices.

On the topic of the dissertation one monograph and three articles are published.

